

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

### ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԷԼ

### ԵՐԵՆԱՆԻ «ՄԻՆԻԹԱՐ ՍԵՔԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄԻՋԵՆ

«14» հուլիսի 2011թ

ք. Երևան

«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ԵՊԼՀ) ի դեմս ռեկտոր Սուրեն Զոյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից և ՀՀ Կրթության և գիտության նախարարության Երևանի «Մինիթար Սեքստացի» կրթահամալիրը (այսուհետ՝ Կրթահամալիր) ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն Աշոտ Բլեյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), բարձր գնահատելով գործընկերությունը, համագործակցությունը կրթական, գործնական և մշակութային ոլորտներում, զարգացնելու համար արդեն հաստատված համագործակցությունը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

#### ՆՊԱՏԱԿԸ

Սույն պայմանագրի հիմնական նպատակն է ԵՊԼՀ-ի և Կրթահամալիրի միջև հաստատել գործընկերային հարաբերություններ, որոնք կնպաստեն երկու հաստատությունների միջև կրթական, մշակութային արդեն գոյություն ունեցող հարաբերությունների զարգացմանը:

#### 1. Պայմանագրի առարկան

1.1. Կրթահամալիրում գործող հումանիտար, լեզվաբանական, քանասիրական ուղղություններով խորացված ուսուցմամբ սովորողների համար, ինչպես նաև Կրթահամալիրի ուսուցիչներին ԵՊԼՀ-ում գործող մասնագիտությունների գծով մեթոդական, հետազոտական և այլ կրթական և գիտական բնույթի աջակցության ցուցաբերում,

1.2. ԵՊԼՀ ուսանողների մանկավարժական և արտադրական պրակտիկայի կազմակերպում Կրթահամալիրում առկա առարկայական ծրագրերի շրջանակներում:

1.3. Կրթահամալիրի շրջանավարտների ԵՊԼՀ-ում բարձրագույն կրթությունը շարունակելու ակնկալիքով Կրթահամալիրում Նպատակային դասարանների (խմբերի) կազմավորում:

## 2. Կողմերի պարտավորությունները

ԵրՊԼՀ-ն և Կրթահամալիրը (այսուհետ՝ «Կողմերը») համաձայնեցին կրթական բնագավառում իրականացնել հետևյալ միջոցառումները.

2.1. Համատեղ հավաքների, սեմինարների, քննարկումների, բանավեճերի կազմակերպում.

2.2. Սկսած 2011-2012 ուսումնական տարվանից՝ Կրթահամալիրում ուսուցման իրականացում Նպատակային դասարաններ (խմբեր) կազմավորելու միջոցով.

2.3 Կրթահամալիրի Նպատակային դասարաններում (խմբերում) ուսումնառության կազմակերպում՝ օգտագործելով նաև Կողմերի փոխհամաձայնեցված լրացուցիչ ծրագրերը.

2.4. Կրթահամալիրի ավագ դպրոցի սովորողների և նրանց ծնողների համար ԵՊԼՀ-ի գործունեությանը ծանոթանալու հնարավորության ընձեռում.

2.5. Յուրաքանչյուր տարի Դպրոցի սովորողների համար ԵՊԼՀ-ում Բաց դռների օրերի և ճանաչողական այցերի կազմակերպում՝ նրանց հնարավորություն ընձեռելով հանդիպելու ԵրՊԼՀ-ի և ֆակուլտետների ղեկավարության ու պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ՝ ծանոթանալու կրթական համակարգին և ուսումնառության առկա հնարավորություններին.

2.6. Կրթահամալիրում ԵրՊԼՀ-ի մանկավարժության, լեզվաբանության և լրագրության բաժինների ուսանողների արտադրական պրակտիկայի կազմակերպում և իրականացում.

2.7. Կրթահամալիրի կազմում գործող հանրակրթական դպրոցների սովորողների, ըստ լեզվական կարողությունների մակարդակների, օտար լեզուների ուսուցման հեղինակային ծրագրերի մշակում և փորձարկում.

2.8. Կրթահամալիրի ավագ դպրոցների օտար լեզուների-թարգմանության խորացված ուսուցման սովորողների մասնագիտական փորձառության կազմակերպում.

2.9. միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում դասավանդվող օտարալեզու առարկաների զարգացման, աջակցություն միջոցով Կրթահամալիրում հասարակագիտություն և այլ առարկաների օտար լեզվով ուսուցմանը աջակցության ցուցաբերում.

2.10. Կրթահամալիրում օտար լեզու և գրականություն դասավանդողների ընտրությանը մասնագիտական աջակցություն.

2.11. Կրթահամալիրի օտար լեզու և գրականություն առարկաներ դասավանդող ուսուցիչներին մեթոդական աջակցության ցուցաբերում, նրանց համար ԵՊԼՀ-ի ուսումնական վարչության օգնությամբ կարճաժամկետ վերապատրաստման դասընթացների կազմակերպում.

2.12. Օլիմպիադաներում օտար լեզուների առաջադրանքների կազմման աջակցություն և համատեղ անցկացում.

2.13. ԵՊԼՀ համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից Կրթահամալիրում ստեղծված ծրագրերի, նյութերի փորձաքննության իրականացում.

2.14. Ուսման շարունակականության նպատակով ԵՊԼՀ ընդունվելու ենթակա շրջանավարտների ընտրությանը աջակցության ցուցաբերում և ՀՀ Կառավարության սահմանված կարգին համապատասխան ընդունելության կազմակերպում:

2.15. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Կրթահամալիրի միջին մասնագիտական որակավորմամբ մանկավարժական աշխատողների որակավորման կազմակերպում բակալավրի ծրագրով:

2.16. Կրթարամալիրում աշխատող բարձրագույն կրթությամբ մասնագետների համար մագիստրոսի որակավորման համար ուսումնական ծրագրերի կազմակերպում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան:

2.17. Կրթահամալիրի ուսուցիչների որակավորման բարձրացմանը նպաստելու համար ԵՊԼՀ-ում կազմակերպվող գիտաժողովներին, սեմինարներին և այլ նմանատիպ միջոցառումներին ներգրավում:

2.18. Անհրաժեշտ գրականության փոխանակում, համատեղ մեղիագրադարանի ստեղծում:

2.19. Կրթահամալիրի դասավանդողների հոդվածների հրապարակում ԵրՊԼՀ-ի պարբերականներում, իսկ համալսարանի ստեղծագործ անձնակազմի հոդվածների հրապարակում Կրթահամալիրի կայքի «Դպիր»-պարբերականում:

2.20. Խորացված ուսուցման ավագ դպրոցի և ԵրՊԼՀ-ի սովորողների էլեկտրոնային պարբերականի հրապարակում:

### **3. Եզրափակիչ դրույթներ**

3.1. Սույն պայմանագիրը կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում:

3.2. Կողմերի կողմից սույն պայմանագրից բխող աշխատանքների և գործառույթների իրականացումը արտացոլվում է տարեկան գործողությունների (միջոցառումների) ծրագրում, որի հիման վրա կազմվում են կողմերի համար ֆինանսական պարտավորություններ առաջացնող համաձայնագրեր:

3.3. Սույն պայմանագիրը կազմվել և ստորագրվել է երկու օրինակով, հայերեն լեզվով: Կողմերից յուրաքանչյուրը ստանում է մեկ օրինակ:

3.4. Սույն պայմանագիրը ուժի մեջ է ստորագրման օրվանից հինգ տարի ժամկետով և կարող է երկարաձգվել կողմերի համաձայնությամբ:

Սույն պայմանագրի համաձայն կողմերը պարտավորվում են ներկայացնել տարեկան հաշվետվություն կողմերի ղեկավար մարմիններին համատեղ գործունեության վերաբերյալ:

3.5. Սույն պայմանագիրը կարող է լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, այդ մասին առնվազն երկու ամիս առաջ գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

3.6. Կողմերի միջև վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Կողմերի իրավաբանական հասցեները և վավերապայմանները.

<p>Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարան ՊՈԱԿ</p> <p>0002, Երևան, Թումանյան 42 <a href="http://www.yslu.am/">http://www.yslu.am/</a></p> <p><b>ՌԵԿՏՈՐ՝ ՍՈՒՐԵՆ ԶՈՒՅԱՆ</b></p>	<p>ՀՀ ԿԳՆ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ</p> <p>0064, Երևան, Ա. Բաբաջանյան 25 www.mskh.am info@mskh.am</p> <p><b>ՏՆՕՐԵՆ՝ ԱՇՈՏ ԲԼԵՅԱՆ</b></p>
---	--